ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱԳԱՐԱՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
с.БАГАРАН

03.12.2013թ.

№ 053

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Բագարան համայնքի 22.07.2013թ-ին կայացած ավագանու թիվ 4 նիստի որոշումները:

Առդիր 10 թերթ

Բագարան համայնքի ղեկավար Գ.Մարգարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1530-13
«04» 12 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

թիվ 4 նիստ

«22» հուլիսի 2013թ. թիվ 1 որոշում

# ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

*Բագարան համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

27.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարան գյուղական համայնքի ավագանու 2013թվականի հուլիսի 22-ի թիվ 4 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

28.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Գևորգյան | | | |
| Ա. Գալոյան | | | |
| Վ. Ղազարյան | | | |
| Վ. Մարգարյան | | | |

ԲԱԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. Մարգարյան

2013 թվականի հուլիսի 22
գ. Բագարան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԹԻՎ 4
ՆԻՍՏԻ N 01 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

1. Ավագանու 2013 թվականի հուլիսի 22-ի թիվ 4 նիստի օրակարգի հաստատում:

   /զեկուցող Գ. Մարգարյան/

2. Համայնքի սոցիալապես անապահով 10 ընտանիքների դրամական օգնություն տրամադրելու մասին:

   /զեկուցող Գ. Մարգարյան/

3. Համայնքի քառամյա ծրագիրը հաստատելու մասին:

   /զեկուցող Գ. Մարգարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«22» հուլիսի 2013թ

թիվ 4 նիստ
թիվ 2 որոշում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ 10 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

Բագարան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

29.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սոցիալապես անապահով 10 ընտանիքների հատկացնել 200000(երկու հարյուր հազար)դրամ դրամական օգնություն համաձայն հավելվածի:

30.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Գևորգյան | | | |
| Ա. Գալոյան | | | |
| Վ. Ղազարյան | | | |
| Վ. Մարգարյան | | | |

ԲԱԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Մարգարյան

2013թվականի հուլիսի 22
գ. Բագարան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ [illegible] ԱՐԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22 –Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ [illegible] ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ 10 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 200000(ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ)ԴՐԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

| N | Անուն Ազգանուն | անձնագրի սերիա. N | գումարը (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Ղազարյան Զոհրաբ | AH 0338875 | 20000 |
| 2 | Վարդևանյան Ֆրունզե | AA 0659115 | 20000 |
| 3 | Նալբանդյան Վարդիթեր | AM 0814587 | 20000 |
| 4 | Ղազարյան Արտուշ | AM 0624656 | 20000 |
| 5 | Մինասյան Ալիսա | AC 0518024 | 20000 |
| 6 | Մովսիսյան Գյուլնարա | AM 0857891 | 20000 |
| 7 | Դավթյան Ձանիկ | AG 0453932 | 20000 |
| 8 | Սահակյան Վաչագան Անջլոիդի | AM 0308759 | 20000 |
| 9 | Մարգարյան Անդրանիկ | AN 0341381 | 20000 |
| 10 | Սահակյան Վարդան | AN 0416156 | 20000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 200000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2013թ

թիվ 4 նիստ
թիվ 3 որոշում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով .

Բագարան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

31.Հաստատել Համայնքի քառամյա ծրագիրը համաձայն հավելվածի:

32.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Գևորգյան | | | |
| Ա. Գալոյան | | | |
| Վ. Ղազարյան | | | |
| Վ. Մարգարյան | | | |

ԲԱԳԱՐԱՆԻ ՀԱՄ

Գ. Մարգարյան

2013թվականի հուլիսի 22
գ. Բագարան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22 –Ի ԹԻՎ [illegible] ՈՐՈՇՄԱՆ

## 1. Ներածություն

Ստորև ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարան համայնքի 2012-2016թթ-ի համալիր զարգացման քառամյա ծրագիր : Ծրագիրը համայնքի ղեկավարի ներկայացմամբ անալիտիկ վերլուծության է ենթարկվել համայնքի ավագանու կողմից:

Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ծրագրերը շատ բազմազան են: Անալիտիկ վերլուծության ընթացքում առավել կարևոր ծրագրերը ընդգրկվեցին համայնքի զարգացման քառամյա ծրագրում:

Զարգացման ծրագրի գործընթացը իրականացվել է հետևյալ քայլերով.

1. Նախապատրաստական աշխատանքներ
2. Համայնքի տեսլականի ձևակերպում
3. Սոցիալ տնտեսական իրավիճակի վերլուծություն
4. Հիմնահարցերի բացահայտում
5. Նպատակների սահմանում
6. Միջնաժամկետ խնդիրներ և դրանց առաջնահերթությունների սահմանում
7. Իրականացման մոնիտորինգ և գնահատում:

## 6. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքի ղեկավարը Գևորգ մարգարյանն է : Նա համայնքը ղեկավարում է 2008թ-ից:Վերընտրվել է 2012 թ-ի սեպտեմբերի 9-ին:Համայնքի ավագանին կազմված է 4 անդամներից:Համայնքի ղեկավարը ստեղծել է 3 հաստիքից բաղկացած աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Յամայնքի ղեկավար

Քարտուղար

Գլխ.մասնագետ

Առաջատար մասնագետ

Գյուղապետարանը աշխատակազմի անդամներից 1-ը ունի բարձրագույն
2-ը միջնակարգ մասնագիտական կրթություն:

Գյուղապետարանի շենքը գտնվում է ոչ բարվոք վիճակում, տեխնիկապես
սակավ ապահովված է :

### Ժողովրդագրություն

Յամայնքը կազմված է 172 տնային տնտեսություններից:
01.01.2013թ-ի դրությամբ համայնքի բնակչությունը է 680 մարդ,
որից 354-ը արական, իսկ 326-ը իգական սեռի: Չափահաս բնակչության
թիվը է 515 մարդ: Թոշակառուները 72 մարդ, միայնակ մայրեր 0-ը , 23-ը ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներ, 4-ը բազմազավակ (3 և ավելի երեխա ունեցող) անչապահաս ընտանիքներ: Յամայնքից բնակչության արտահոսք գրեթե կա: Յամայնքի բնակչության թվաքանակի աճը վերջին երեք տարիների միջին հաշվով կազմել է 5% :

## Համայնքի սեփականությունը և բյուջեն

Համայնքի սեփականություն են հանդիսանում.
Մշակույթի տուն 1, մանկապարտեզի շենք 1, որը 1997թ-ից տրամադրվել է համայնքի թվով 11 սոցիալապես անապահով ընտանիքների որպես ժամանակավոր կացարան, գրադարան 1, խմելու և ոռոգման ջրի ներհամայնքային ցանց (խմելաջրի ցանց 5կմ, ոռոգման ջրի ցանց 36.1կմ) , վարչական շենք 1, ավտոմեքենա (ԳԱԶ-31105-120) ,
4435.98հա գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր:
2012թ-ի բյուջեի եկամուտները ունեցել է հետևյալ տեսքը՝

| | Պլանային | Փաստացի |
|---|---|---|
| Հողի հարկ | 3200.0 հազ. դրամ | 3229.0 հազ. դրամ |
| Գույքահարկ | 651.1 հազ. դրամ | 654.8 հազ. դրամ |
| Հողի վարձավճար | 400.0 հազ. դրամ | 409.4 հազ. դրամ |
| Տեղական տուրք | 100.0 հազ. դրամ | 0 |
| Դոտացիա | 5051.0 հազ. դրամ | 5051.0 հազ. դրամ |
| Ընդամենը | 9402.1 հազ. դրամ | 9444.2 հազ. դրամ |

## Զբաղվածություն

Համայնքի բնակչություն հիմնականում զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ: Գյուղապետարանում, դպրոցում, բուժամբուլատորիայում և մշակույթի տանը զբաղված են 32 մարդ: Համայնքում գործող մասնավոր բիզնեսում (գործում է չրի արտադրություն 1-ական արտադրամաս) զբաղված են 5-10 մարդ:
Համայնքում առկա է սեզոնային զբաղվածությունը: Բնակչությունը հողագործությունից ազատ ժամանակաշրջանում մոտավորապես 4 ամիս (նոյեմբեր- փետրվար) հիմնականում թերզբաղված է (զբաղված է միայն անասնապահությամբ) :

Բուսաբուծությունում կիրառվում է վարձու աշխատանքը: Մոտավոր գնահատականներով 40 մարդ սեզոնի ընթացքում վարձով աշխատում են համայքի մյուս գյուղացիական տնտեսություններում:
Բուսաբուծությունում վարձու աշխատանքի 1 օրվա վարձը կազմում է 5000 դրամ, իսկ անասնապահությունում՝ 5000 դրամ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքը 4616.33 հա է, որից վարելահողերը կազմում են 709.89 հա, պտղատու և խաղողի այգիները 42.45 հա, խոտհարկները 22.09 հա, արոտավայրերը 3445.2 հա :

Բուսաբուծությունում վերջին տարիներին նկատվում են դրական միտումներ՝ ավելանում են պտղի տարածքները, հիմնվում են նոր այգիներ, որը պայմանավորված է շուկայում պտղի և պահանջարկի ավելացմամբ:

Համայնքում անասնապահության ճյուղերից լուրջ հեռանկար ունեն տավարաբուծությունը և ոչխարաբուծությունը, որը հիմնականում պայմանավորված է արոտավայրերի առկայությամբ:

Խոզաբուծությունը և թռչնաբուծությունը համայնքում թույլ են զարգացած հիմնականում կերային բազայի (հատիկային մշակաբույսերի ցանկատարածությունների նվազում և խտացրած կերերի բարձր գներ շուկաների հեռավորության պատճառով) պակասի պատճառով: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա է 215 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր 95 գլուխ, ոչխարներ և այծեր 1381 գլուխ, խոզեր՝ 99 գլուխ, թռչուններ 968 թև:

## ՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ոչ գյուղատնտեսական գործունեությունը համայնքում թույլ է զարգացած:

Համայնքի տարածքում առկա են 3 փոքր խանութներ, չրի 1 արտադրամաս (սեզոնի ընթացքում զբաղված են 5-10 մարդ) :

## ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը ունի 5 կմ երկարություն և չի գործում խողովակների հերմետիկության պատճառով : Բնակիչները խմելաջուրը բերում են մեքենաներով կամ ծեռքով: Ոռոգման ջուրը բերվում է Ախուրյան գետից ինքնահոս եղանակով: Ոռոգման ներքին ցանցի վիճակը անբավարար է : Ջրի կորուստը մասնագետների գնահատմամբ կազմում է 20-30% : 20 /3 թվականին գյուղացիական տնտեսությունները ոռոգման ջրի դիմաց վճարել են 1 խոր. մ համար 11դրամ:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Որակյալ կրթության ապահովումը և մատչելիությունը համարվում է կարևորագույն խնդիր համայնքի բնակչության համար: Նախադպրոցական կրթությունը ներկայումս ֆիզիկապես անմատչելի է համայնքի բնակչության համար: Համայնքում մանկապարտեզը գործել է մինչև 1997թ: Փորձագիտական գնահատումներով նոր շենքի կառուցումն ավելի էժան կլինի: Նախադպրոցական երեխաների թիվը 2013թ.ունվարի 1-ի դրությամբ կազմում է 32 երեխա:
Համայնքի գործող դպրոցը կառուցվել է 1987 թվականին 397 աշակերտ/տեղ հզորությամբ: 2005թ-ին ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի աջակցությամբ վերանորոգվել է դպրոցի տանիքը: Ներկայումս դպրոցի շենքային պայմանները բավարար է, փոխվել են պատուհանները և դռները, չունի ջեռուցման համակարգ:
Առողջապահական ծառայությունները մատուցվում է Երվանդաշատի առողջության կենտրոնի կողմից շաբաթը մեկ անգամ բուժ ամբուլատորիայում, որը գտնվում է գյուղապետարանի շենքում: Վերջին 5 տարիներին համայնքում չեն գրանցվել մանկամահածության դեպքեր: Համայնքում հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման աշխատանքները որակյալ են իրականացվում , սակայն առաջնային բուժօգնության համար միջոցները անբավարար են: Բուժամբուլատորիան ապահոված չէ անհրաժեշտ դեղամիջոցներով( մեծ խնդիր է հակաթույնով թերապահովածությունը) ;
Մշակույթի տունը գտնվում է աննխիթար վիճակում . 2000թ-ից չի գործում, ունի վերանորոգման կարիք, չի ծառայում իր հիմնական նպատակին: Համայնքի երիտասարդների սոցիալական , հոգևոր մշակութային և ֆիզիկական զարգացման աջակցելուն, նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորման համար չկան անհրաժեշտ պայմաններ:

## ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խմելաջրի բացակայություն:
Գազաֆիկացման աշխատանքները կիսավարտ են:
Աղբահանության գործը համայնքում կարգավորված է:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Բագարան -Արմավիր ճանապարհի վիճակը անբավարար է : Մոտ 44 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհների վիճակը աննխիթար է .Արմավիր-Բագարան երթուղին չի սպասարկվում: Համայնքում առկա է 70 մարդատար և 15 բեռնատար մեքենա: Համայնքում առկա է փոստատուն, որը գտնվում է գյուղապետարանի շենքում : Համայնքն ապահոված է բջջային հեռախոսակապով (ՎԻՎԱ ՍԵԼ և ԱՐՄԵՆ ԹԵԼ):